

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«30» 01 2019 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Լևոն Թավադյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Բարդ և տարրական քիմիական ռեակցիաների, այրման պրոցեսների կինետիկան և մեխանիզմը: Նոր պրոցեսների մշակում և բազմաֆունկցիոնալ նյութերի ստացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 118934600 (հարյուր տասնութ միլիոն ինն հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 118934600 (հարյուր տասնութ միլիոն ինն հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:



10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/հ 900011024115, ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝



(ստորագրություն)
ՈՍԿԻՆ ՄԱՐՏԻՈՍՅԱՆ


ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ.
Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ

ք. Երևան, Պ. Սևակ 5/2


ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/հ 900018005471, ՀՎՀՀ 00008921

Ինստիտուտի տնօրեն՝


(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ԹԱՎԱԴՅԱՆ


Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Լևոն Թավադյան)

Հավելված 1
« 30 » 01 2019 թ.
N 4-9 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Սարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Լևոն Թավադյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 30 » 01 2019 թ. N 4-9 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 118934600 (հարյուր տասնութ միլիոն ինն հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝

A. Մարտիրոսյան
(ստորագրություն)

ՈՍՐԻԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ

Տնօրեն (ռեկտոր)՝

L. Tavakoliyan
(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ԹԱՎԱԴՅԱՆ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Բարդ և տարրական քիմիական ռեակցիաների, այրման պրոցեսների կինետիկան և մեխանիզմը:

Նոր պրոցեսների մշակում և բազմաֆունկցիոնալ նյութերի ստացում ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Հետազոտությունները նշված ոլորտում նպատակաուղղված են այնպիսի բարդ քիմիական պրոցեսների կինետիկայի ու մեխանիզմների բացահայտմանը, ինչպիսիք են՝ ածխաջրածինների ու այլ օրգանական նյութերի գազաֆազ ու հեղուկաֆազ օքսիդացման ռեակցիաները, բազմաֆունկցիոնալ պինդ արգասիքների սինթեզն այրման ռեժիմում, ածխաջրածինների ու սպիրտների կատալիտիկ փոխարկումները, նանոփոշիների սինթեզը էքստրեմալ պայմաններում, Հայաստանի մետաղ պարունակող հանքանյութերի և դրանցից ստացված խտանյութերի վերամշակումը, շղթայական ռեակցիաների ազդեցությամբ անօրգանական միացությունների հոմոգեն և հետերաֆազ քիմիական փոխարկումները և այլն: Այդ պրոցեսները հիմնականում բազմափուլ են և դրանց մեխանիզմի մանրամասն բացահայտման համար անհրաժեշտ են դրանց առանձին՝ տարրական փուլերի հետազոտություններ: Նշված բարդ քիմիական փոխարկումների մեխանիզմների վերաբերյալ ստացված արդյունքները կօգտագործվեն նոր բազմաֆունկցիոնալ նյութերի՝ նանոփոշիների, դժվարահալ միացությունների, մետաղափոշիների, կատալիզատորների, ջրածնային մարտկոցների, մետաղների համաձուլվածքների, սննդում և կերերում կիրառվող արդյունավոր կենսաակտիվ հավելումների, խմելու ջրի մաքրման ու վարակազերծման նպատակով օգտակար և այլ նյութերի սինթեզման նպատակներով: Միաժամանակ կմշակվեն այնպիսի պրոցեսների տեխնոլոգիական հիմունքները, ինչպիսիք են՝ օրգանական հումքի, այդ թվում և թթվածին պարունակող միացությունների փոխարկումները արժեքավոր արգասիքների՝ օքսիգենատների, ՀՀ հանքավայրերից ստացվող մետաղ պարունակող խտանյութերի համալիր վերամշակումը, ապահովելով նպատակային արգասիքների մեծ ելքեր և պահպանելով բնապահպանական ժամանակակից չափանիշները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Արդիականություն, ստացված և ներկայացված արդյունքների հավաստիություն, ժամանակակից հետազոտական մեթոդների և սարքավորումների կիրառում, տեսական մոդելներից ստացված հաշվարկային և փորձարարական տվյալների համադրում, նորարարական առաջարկների մշակում, արտոնագրերի և հեղինակային իրավունքների հայտերի ձևակերպում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ազատ ռադիկալային ռեակցիաներ հեղուկ ֆազում: Հակաօքսիդիչներ

Ելանյութերի իմպուլսային ներարկման կինետիկ ԷՊՌ եղանակով ուսումնասիրել լայն ճանաչված կենսահակաօքսիդիչ ռեպերատորի՝ երրորդային բութիլ պերօքսիդային ռադիկալների հետ փոխազդեցության կինետիկ օրինաչափությունները, բացահայտել այդ փոխազդեցության մեխանիզմը:

Ուսումնասիրել ֆոլաթթվի և ֆոլատների օքսիդավերականգնիչ վոլտամպերաչափական պարամետրերը և հակապերօքսիռադիկալային ակտիվությունը քառակուսա - ալիքային վոլտամպերաչափական եղանակով: Հետազոտել ջրային միջավայրում ֆոլաթթվի և ֆոլատների հակապերօքսիռադիկալային ակտիվությունը ORAC եղանակով՝ համակցված ֆլյուորեսցենտային սպեկտրոսկոպիայի հետ: Միաժամանակ նախատեսվում է ֆոլատների հակաօքսիդիչ հատկություններն ուսումնասիրել լիպիդների պերօքսիդացման մոդելային, ռեակցիայի միցելային համակարգում՝ մոլեկուլային թթվածնով մեթիլլինոլեատի օքսիդացման շղթայական ազատ ռադիկալային ռեակցիայում ջրալույծ ազո-հարուցիչի օգտագործմամբ:

Հոմոգեն և հետերոգեն քիմիական կատալիտիկ ռեակցիաներ: Նանոնյութերի և նանոկատալիզատորների ստացում և կիրառում

Ուսումնասիրել պրոպանի և էթիլենի համատեղ օքսիդացումը՝ կախված կվարցե ռեակտորի տրամագծից և էլային խառնուրդի բաղադրությունից: Հետազոտել տարբեր եղանակներով սինթեզված վոլֆրամի կարբիդի և Ni-Co-ի նանոփոշիների առկայությամբ մեթանի ածխաթթվային փոխարկման պրոցեսում առաջացած CO+H₂ խառնուրդի հետագա փոխարկումները՝ որպես կատալիզատորներ օգտագործելով SiO₂-ի վրա նստեցված կոբալտի և երկաթի նանոփոշիները:

Հետերոգեն ռադիկալային ռեակցիաները բնապահպանական քիմիայում և օրգանական միացությունների օքսիդացման պրոցեսներում

Բորաթթվով և կալիումի քլորիդով մշակված ռեակտորներում C₂H₅CHO-ի գազաֆազ օքսիդացման պրոցեսի կինետիկական օրինաչափությունների անալիզի հիման վրա ուսումնասիրել էթիլենի և էթիլ հիդրոպերօքսիդի (C₂H₅OOH) հետերոգեն առաջացման հնարավորությունը:

Բացահայտել պինդ մակերևույթին C₂H₅ ռադիկալի նոր ուղղություններով ընթացող ռեակցիաների հնարավորությունը:

Ռեակցիոն միջավայրի վրա ռեակտորի մակերևույթային շերտում առաջացած օզոնի մոլեկուլների տրոհման ազդեցության հետազոտումը թվային մոդելավորման եղանակով:

WO₃/SiO₂ կատալիզատորի սինթեզում և դրա ակտիվության հետազոտում ջրային լուծույթում օրգանական ադսորպցի (մեթիլենային կապույտ) ֆոտոկատալիզային օքսիդացման պրոցեսում:

Մինթեզել Ag-TiO₂ կատալիզային համակարգը և հետազոտել մեթիլենային կապույտ ու մեթիլ օրանժ նեկանյութերի ֆոտոքիմիական քայքայումը լույսի տեսանելի տիրույթում:

Բնական գազի օքսիդացմամբ մեթանոլի ուղղորդված փոխարկումներ, ծծմբային գազից ծծմբի փոխարկման զուգորդված ռադիկալաշղթայական ռեակցիաներ “ընդհատվող բոցերի” ռեժիմում, ածխաջրածինների “սառը բոցերի” ուսումնասիրում “սուրոզատ” վառելիքի ստեղծման նպատակով

Իրականացնել մեթանից (բնական գազից) օքսիդացման եղանակով կարևոր արգասիքներ ստանալու պրոցեսում ալկիլ պերօքսիդային ռադիկալների միմյանց հետ փոխազդելու տարբեր ուղիների ուսումնասիրում քվանտային մեխանիկայի եղանակով: Այս ռեակցիաները որոշիչ դեր են խաղում այդ բարդ շղթայական պրոցեսում:

Բացահայտել բնական գազի հիման վրա բազմակոմպոնենտ „սուրոզատ” վառելիքների այրման վրա ցիկլոհեքսանի հարուցիչ ազդեցությունը:

Ուսումնասիրել նորմալ և ցիկլոհեքսանների օքսիդացման ռեակցիաները ռեազենտների տարբեր բաղադրությունների դեպքում:

Մետաղական և կերամիական նյութերի ստացման նոր պրոցեսների գիտական հիմունքների մշակում՝ հետերոգեն այրման պրոցեսների հիման վրա և դրանց կինետիկայի հետազոտություն

Այրման ռեժիմում Ni-W կեղծ համաձուլվածքների ստացում, որպես ելանյութ օգտագործելով տարբեր եղանակներով (վառարանային սինթեզով - խոշորահատիկ և լուծույթների այրման սինթեզով - նանոչափսի) ստացված նիկելի վոլֆրամատ՝ NiWO₄: Մետաղների օքսիդների (NiO, WO₃) փոխարեն NiWO₄ աղը որպես ելանյութ օգտագործումը բարենպաստ պայմաններ է ստեղծվում բարձր համասեռությամբ Ni-W կոմպոզիտային փոշու ստացման համար: Իրականացվելու է աղի՝ Mg/C համակցված վերականգնիչով վերականգնման պրոցեսի թերմոդինամիկական վերլուծություն և այրման պրոցեսի փորձարարական հետազոտություն: Ջերմային անալիզի եղանակով ուսումնասիրվելու է NiWO₄-ից մետաղների համատեղ վերականգնման մեխանիզմը ոչ իզոթերմ պայմաններում՝ ծրագրավորված տաքացման պայմաններում:


“Հիդրիդային ցիկլում” մետաղների հիդրիդներից դժվարահալ մետաղների համաձուլվածքների ցածրջերմաստիճանային ձևավորման մեխանիզմի հետազոտումը և ջրածնով հարուցված ֆազային անցումների ուսումնասիրումը համաձուլվածքներում և դրանց հիդրիդներում

Հետազոտել “հիդրիդային ցիկլի” եղանակով տիտանի հիմքով կիրառական նշանակության համաձուլվածքների՝ Ti-6Al-4V; Ti-6Al-7Nb; Ti-3Al-2.5V, ինչպես նաև

տիտանի ալյումինիդների Ti-Al; Ti-Al-Nb սինթեզելու պայմանները: Ուսումնասիրել ստացված համաձուլվածքների ֆիզիկաքիմիական և կառուցվածքային առանձնահատկությունները՝ հետագա կիրառություններում դրանց մրցունակությունը ապահովելու նպատակով:

ՀՀ հանքավայրերից ստացվող պղնձի, մոլիբդենի, բազմամետաղային խտանյութերի և թափոնապոչերի համալիր վերամշակման տեխնոլոգիաների մշակում և փորձարկում
Մշակել Քաջարանի «հանգած» պոչամբարներից ստացված պիրիտային և մագնետիտային խտանյութերից երկաթը (Fe_2O_3 օքսիդի կամ տարրական Fe-ի ձևով) և ծծումբը (Na_2S -ի կամ տարրական ծծմբի ձևով) արդյունավետորեն կորզելու եղանակներ:


Կազմակերպության
ունօրեն (ռեկտոր)՝



(Լևոն Թավադյան)

(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(Լևոն Թավադյան)

(ստորագրություն)



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

Բարդ և տարրական քիմիական ռեակցիաների, այրման պրոցեսների կինետիկան և մեխանիզմը: Նոր պրոցեսների մշակում և բազմաֆունկցիոնալ նյութերի ստացում ծրագրի

Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	Բարդ և տարրական քիմիական ռեակցիաների, այրման պրոցեսների կինետիկան և մեխանիզմը: Նոր պրոցեսների մշակում և բազմաֆունկցիոնալ նյութերի ստացում	<p>Ելանյութերի իմպուլսային ներարկման կինետիկ էՊՌ եղանակով ուսումնասիրել լայն ճանաչված կենսահակաօքսիդիչ ռեակտիվների երրորդային բութիլ պերօքսիդային ռադիկալների հետ փոխազդեցության կինետիկ օրինաչափությունները, բացահայտել այդ փոխազդեցության մեխանիզմը:</p> <p>Ուսումնասիրել պրոպանի և էթիլենի համատեղ օքսիդացումը կախված կվարցե ռեակտորի տրամագծից և ելային խառնուրդի բաղադրությունից:</p> <p>Բորաթթվով և կալիումի քլորիդով մշակված ռեակտորներում C₂H₅CHO-ի գազաֆազ օքսիդացման պրոցեսի կինետիկական օրինաչափությունների անալիզի հիման վրա ուսումնասիրել էթիլենի և էթիլ հիդրոպերօք-</p>	Փորձարարական հետազոտություն, տեսական հաշվարկներ, սարքերի նախագծում և պատրաստում	Հոդվածների և թեզիսների տպագրում, գեկուցումներ միջազգային գիտաժողովներում, նորարարական առաջարկներ, նոր տեխնոլոգիաներ, արտոնագրերի և հեղինակային իրավունքների հայտեր	01.01.2019 - 31.03.2019	23786.92

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

սիդի (C_2H_5OOH) հետե-
րոգեն առաջացման
հնարավորությունը:

Իրականացնել մեթա-
նից (բնական գազից)
օքսիդացման եղանա-
կով կանոր արգա-
սիքներ ստանալու պրո-
ցեսում ալկիլ պեր-
օքսիդային ռադի-
կալների միմյանց հետ
փոխազդելու տարբեր
ուղիների ուսումնա-
սիրում քվանտային մե-
խանիկայի եղանակով:
Այս ռեակցիաները որո-
շիչ դեր են խաղում այդ
բարդ շղթայական պրո-
ցեսում:

Այրման ռեժիմում Ni-W
կեղծ համաձուլվածք-
ների ստացում, որպես
ելանյութ օգտագոր-
ծելով տարբեր եղանակ-
ներով (վառարանային
սինթեզով – խոշորահա-
տիկ և լուծույթների
այրման սինթեզով –
նանոչափսի) ստացված
նիկելի վոլֆրամատ՝
 $NiWO_4$:

Հետազոտել “հիդրիդա-
յին ցիկլի” եղանակով
տիտանի հիմքով կիրա-
ռական նշանակության
համաձուլվածքների Ti-
6Al-4V; Ti-6Al-7Nb; Ti-
3Al-2.5V սինթեզելու
պայմանները:

Մշակել Քաջարանի
«հանգած» պոչամբար-
ներից ստացված պիրի-
տային և մագնետիտա-
յին խտանյութերից եր-
կաթը (Fe_2O_3 օքսիդի
կամ տարրական Fe-ի
ձևով) արդյունավետ-

	<p>րեն կորզելու եղանակներ:</p>				
	<p>Ուսումնասիրել ֆոլաթթվի և ֆոլատների օքսիդավերականգնիչ վոլտամպերաչափական պարամետրերը և հակապերօքսիդադիկալային ակտիվությունը քառակուսա – ալիքային վոլտամպերաչափական եղանակով:</p> <p>Հետազոտել տարբեր եղանակներով սինթեզված վոլֆրամի կարբիդի և Ni-Co-ի նանոփոշիների առկայությամբ մեթանի ածխաթթվային փոխարկման պրոցեսում առաջացած CO+H₂ խառնուրդի հետագա փոխարկումները՝ որպես կատալիզատորներ օգտագործելով SiO₂-ի վրա նստեցված կոբալտի և երկաթի նանոփոշիները:</p> <p>Բացահայտել պինդ մակերևութին C₂H₅ ռադիկալի նոր ուղղություններով ընթացող ռեակցիաների հնարավորությունը:</p> <p>Բացահայտել բնական գազի հիման վրա բազմակոմպոնենտ „սուրոգատ” վառելիքների այրման վրա ցիկլոհեքսանի հարուցիչ ազդեցությունը:</p> <p>Իրականացնել աղի՝ Mg/C համակցված վերականգնիչով վերականգնման պրոցեսի թերմոդինամիկական</p>	<p>Փորձարարական հետազոտություն, տեսական հաշվարկներ, սարքերի նախագծում և պատրաստում</p>	<p>Հողվածների և թեզիսների տպագրում, զեկուցումներ միջազգային գիտաժողովներում, նորարարական առաջարկներ, նոր տեխնոլոգիաներ, արտոնագրերի և հեղինակային իրավունքների հայտեր</p>	<p>01.04.2019 - 30.06.2019</p>	<p>29733.65</p>

	<p>վերլուծություն և այրման պրոցեսի փորձարարական հետազոտություն:</p> <p>Հետազոտել “հիդրիդային ցիկլի” եղանակով տիտանի հիմքով կիրառական նշանակության համաձուլվածքների Ti-Al; Ti-Al-Nb սինթեզելու պայմանները:</p>				
	<p>Հետազոտել ջրային միջավայրում ֆոլաթթվի և ֆոլատների հակապերօքսիդացիային ակտիվությունը ORAC եղանակով՝ համակցված ֆլյուորեսցենտային սպեկտրոսկոպիայի հետ:</p> <p>Ռեակցիոն միջավայրի վրա ռեակտորի մակերևույթային շերտում առաջացած օզոնի մոլեկուլների տրոհման ազդեցության հետազոտումը թվային մոդելավորման եղանակով:</p> <p>Ուսումնասիրել նորմալ և ցիկլոհեքսանների օքսիդացման ռեակցիաները ռեազենտների տարբեր բաղադրությունների դեպքում:</p> <p>Ջերմային անալիզի եղանակով ուսումնասիրել NiWO₄-ից մետաղների համատեղ վերականգնման մեխանիզմը ոչ իզոթերմ պայմաններում՝ ծրագրավորված տաքացման պայմաններում:</p> <p>Ուսումնասիրել Ti-6Al-4V; Ti-6Al-7Nb; Ti-3Al-</p>	<p>Փորձարարական հետազոտություն, տեսական հաշվարկներ, սարքերի նախագծում և պատրաստում</p>	<p>Հոդվածների և թեզիսների տպագրում, զեկուցումներ միջազգային գիտաժողովներում, նորարարական առաջարկներ, նոր տեխնոլոգիաներ, արտոնագրերի և հեղինակային իրավունքների հայտեր</p>	<p>01.07.2019 - 30.09.2019</p>	<p>29733.65</p>

	<p>2.5V համաձուլվածքների ֆիզիկաքիմիական և կառուցվածքային առանձնահատկությունները՝ հետագա կիրառություններում դրանց մրցունակությունն ապահովելու նպատակով:</p>				
	<p>Ուսումնասիրել ֆոլատների հակաօքսիդիչ հատկություններն լիպիդների պերօքսիդացման մոդելային ռեակցիայի միցելային համակարգում՝ մոլեկուլային թթվածնով մեթիլլինոլեատի օքսիդացման շղթայական ազատ ռադիկալային ռեակցիայում ջրալույծ ազոհարուցիչի օգտագործմամբ:</p> <p>WO_3/SiO_2 կատալիզատորի սինթեզում և դրա ակտիվության հետազոտում ջրային լուծույթում օրգանական ադտոտիչի (մեթիլենային կապույտ) ֆոտոկատալիզային օքսիդացման պրոցեսում:</p> <p>Սինթեզել $Ag-TiO_2$ կատալիզային համակարգը և հետազոտել մեթիլենային կապույտ ու մեթիլ օրանժ ներկանյութերի ֆոտոքիմիական քայքայումը լույսի տեսանելի տիրույթում:</p> <p>Ուսումնասիրել $Ti-Al$; $Ti-Al-Nb$ համաձուլվածքների ֆիզիկաքիմիական և կառուցվածքային առանձնահատ-</p>	<p>Փորձարարական հետազոտություն, տեսական հաշվարկներ, սարքերի նախագծում և պատրաստում</p>	<p>Հոդվածների և թեզիսների տպագրում, գեկուցումներ միջազգային գիտաժողովներում, նորարարական առաջարկներ, նոր տեխնոլոգիաներ արտոնագրերի և հեղինակային իրավունքների հայտեր</p>	<p>01.10.2019 - 31.12.2019</p>	<p>35680.38</p>

	<p>կույթունները՝ հետագա կիրառություններում դրանց մրցունակությունը ապահովելու նպատակով:</p> <p>Մշակել Քաջարանի «հանգած» պոչամբարներից ստացված պիրիտային և մագնետիտային խտանյութերից ծծումբը (Na₂S-ի կամ տարրական ծծմբի ձևով) արդյունավետորեն կորզելու եղանակներ:</p>			
Ընդամենը				118 934.6

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝

(Handwritten signature)
 (ստորագրություն)

(Լևոն Թավադյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(Handwritten signature)
 (ստորագրություն)

(Լևոն Թավադյան)





ՆԱԽԱՀԱՇԻՎ

Բարդ և տարրական քիմիական ռեակցիաների, այրման պրոցեսների կինետիկան և մեխանիզմը: Նոր պրոցեսների մշակում և բազմաֆունկցիոնալ նյութերի ստացում ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	83112.2	16622.44	20778.05	20778.05	24933.66
2	տնտեսական և այլ ծախսեր*	16000.0	3200.0	4000.0	4000.0	4800.0
Ընդամենը (առանց ԱԱՀ)		99112.2	19822.44	24778.05	24778.05	29793.66
ԱԱՀ		19822.4	3964.48	4955.6	4955.6	5946.72
ԸՆԴԱՄԵՆԸ		118934.6	23786.92	29733.65	29733.65	35680.38

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝  (Լևոն Թավադյան)
 (ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝  (Կարինե Պետրոսյան)
 (ստորագրություն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված 4.1
 « 30 » 01 2019 թ.
 N 4-9 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	9918.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	8400.0
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	300.0
	կապի ծառայություն	850.0
	աղբահանություն	368.0
2	Գույք	
3	Մարքեր և սարքավորումներ	2100.0
4	Նյութեր	3838.0
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	144.0
	
Ընդամենը		16000.0

Կազմակերպության տնօրեն՝ [Signature] (Լևոն Թավադյան)
 (ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ [Signature] (Կարինե Պետրոսյան)
 (ստորագրություն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բարդ և տարրական քիմիական ռեակցիաների, այրման պրոցեսների կինետիկան և մեխանիզմը: Նոր պրոցեսների մշակում և բազմաֆունկցիոնալ նյութերի ստացում ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Թավադյան Լևոն Աղասիի	Տնօրեն և բաժնի վարիչ	ք.գ.դ.	183.0
2		Գիտական ղեկավար		140.0
3	Հարությունյան Արկաղի Բենիամինի	Փոխտնօրեն գիտության գծով և լաբ. վարիչ	ք.գ.թ.	153.0
4	Սարգսյան Հրաչյա Պարզևի	Գլխավոր ճարտարագետ և ա.գ.ա.	Ֆ.մ.գ.թ.	136.4
5	Գրիգորյան Եվա Գերմանի	Գիտական քարտուղար և գ.ա.	ք.գ.թ.	120.4
6		Տնօրենի օգնական, քարտուղար		78.0
7	Մանթաշյան Ադոլֆ Հայրապետի	Տնօրենի խորհրդական և լաբ. վարիչ	ք.գ.դ.	245.0
8	Պետրոսյան Կարինե Հենրիկի	Գլխավոր հաշվապահ		97.0
9	Գևորգյան Սուսաննա Թորգոմի	Հաշվապահ		74.1
10	Ստեփանյան Արմինե Բագրատի	Կ.գ.ա. և գնում-նե-րի համակարգող		116.9
11	Բալուխինա Մարինա Գևորգի	Կադրերի տեսուչ		77.0
12		Լաբ. վարիչ		41.5
13	Մուսայելյան Մակիչ Վազգենի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8

* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը


14	Ներսեսյան Լևոն Անդրանիկի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	127.0
15	Քոչարյան Գասպար Հրայրի	Գ.ա.	ք.գ.թ.	77.9
16	Հարությունյան Լուսիկ Հայկազի	Գ.ա.		74.1
17	Սահակյան Ադրինե Դավիթի	Կ.գ.ա.		77.9
18	Մանուկյան Զարուհի Հովհաննեսի	Կ.գ.ա.		77.9
19	Հովհաննիսյան Արմեն Արթուրի	Կ.գ.ա.		80.0
20	Սեդրակյան Լիլիթ Համագասպի	Կ.գ.ա.		100.0
21	Դանիելյան Արթուր Միերի /հ/	Ճարտարագետ		40.4
22	Բաղդասարյան Ստելլա Այդինի	Ճարտարագետ		37.7
23	Մաթևոսյան Աշոտ Սիրեկանի	Պարեն և ճարտարագետ		114.8
24	Պապոյան Դավիթ Սոսի	Թարգմանիչ		37.7
25	Գևորգյան Աշոտ Սերյոժայի /հ/	Առաջ. գ.ա.	Ֆ.-մ.գ.դ.	41.5
26	Տոնիկյան Հակոբ Ղազարի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8
27	Մինասյան Սեյրան Հենրիկի	Խմբի ղեկավար	ք.գ.թ.	36.4
28	Մխիթարյան Լիանա Նորիկի /հ/	Լաբորանտ		40.4
29	Վարդանյան Իմա Արմենակի	Գլխավոր գիտաշխատող	ք.գ.դ.	72.8
30	Մանուչարովա Լորիետտա Անդրանիկի	Ա. գ. ա.	ք.գ.թ.	72.8
31	Սարգսյան Գառնիկ Նորայրի	Ա. գ. ա.	Ֆ.-մ.գ.թ.	72.8
32	Փիլոյան Հարություն Ազկերտի	Գ. ա.	ք.գ.թ.	40.4
33	Ծառուկյան Մամվել Վանիկի	Գ. ա.		74.1
34	Մարտիրոսյան Աստինե Սերգեյի	Կ.գ.ա.		79.3
35	Սարգսյան Տաթևիկ Զիվանի	Կ.գ.ա.		40.4
36	Արսենտո Սերգեյ Դմիտրի	Լաբ. վարիչ	ք.գ.դ.	80.0
37	Գրիգորյան Ռիտա Ռուբենի	Ա. գ. ա.	ք.գ.թ.	72.8
38	Մնացականյան Ռաման Արամի	Ա. գ. ա.	ք.գ.թ.	72.8

39	Պողոսյան Միխայիլ Ջհանգիրի	Ա. գ. ա.	ք.գ.թ.	72.8
40	Մուրադյան Ավետիք Արշալույսի	Ա. գ. ա.	ք.գ.թ.	38.0
41	Պողոսյան Նարեկ Միխայիլի	Գ.ա.	ք.գ.թ.	40.4
42	Դավթյան Դավիթ Հայրապետի /հ/	Կ.գ.ա.		40.4
43	Ղուկասյան Պետրոս Սարգսի	Առաջ.գ.ա.	ք.գ.դ.	77.9
44	Մակարյան Էդուարդ Մկրտիչի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	77.8
45	Դավթյան Արամ Համլետի	Գ.ա.	ք.գ.թ.	72.8
46	Մովսիսյան Տաթևիկ Գարեգինի	Կ.գ.ա.		40.4
47	Աբրահամյան Կարեն Համասիկի /հ./	Կ.գ.ա.		37.7
48		Կ.գ.ա.		79.3
49	Առաքելյան Լուսինե Սամսոնի	Կ.գ.ա.		79.3
50	Էվինյան Մավվինա Ավետիքի	Կ.գ.ա.		79.3
51	Հովումյան Ժորիկ Գրիգորի	Ավագ ճարտարագետ		37.7
52		Կ.գ.ա.		74.2
53	Դուրխանյան Սեդա Կարենի	Լաբ. վարիչ	տ.գ.դ.	80.0
54	Հակոբյան Հասմիկ Գուրգենի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8
55	Աղաջանյան Նելլա Նիկողայի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8
56	Մարդանյան Սոնա Սմբատի /հ./	Ա.գ.ա.	կ.գ.դ.	37.7
57	Ալեքսանյան Անահիտ Գուրգենի	Գ.ա.		74.1
58	Մնացականյան Նունե Լևոնի	Գ.ա.		74.1
59	Տեր-Գալստյան Օֆելյա Պարույրի	Գ.ա.		74.1
60	Մուրադյան Գառնիկ Նորիկի	Կ.գ.ա.		79.3
61	Պողոսյան Ջումրիկ Խաչիկի	Տեխնիկ		74.1
62		Տեխնիկ		40.4

63	Թումանյան Մանվել Էդիկի	Ճարտարագետ		109.1
64	Խարատյան Սուրեն Լևոնի /հ./	Լաբորատորիայի վարիչ	Ֆ.-մ.գ.դ.	81.0
65	Չատիլյան Հակոբ Աղվանի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8
66	Նիսիյան Օֆիկ Մեսրոպի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8
67	Աբովյան Լարիսա Սուրենի	Ա.գ.ա.	ք.գ.թ.	72.8
68	Նազարեթյան Խաչիկ Թոռնիկի	Կ.գ.ա.		79.3
69	Ասատրյան Կարինե Վլադիմիրի	Կ.գ.ա.		37.7
70	Խառատյան Անահիտ Սուրենի	Կ.գ.ա.		74.1
71	Ամիրխանյան Նարինե Հրաչիկի	Կ.գ.ա.		40.4
72	Զաքարյան Մարիետա Կարենի /հ./	Կ.գ.ա.		40.4
73	Կիրակոսյան Հասմիկ Վահագի /հ/	Կ.գ.ա.		40.4
74	Հակոբյան Կլիմենտ Ենոքի	Լաբորատորիայի վարիչ	տ.գ.թ.	80.0
75	Քարամյան Գագիկ Գուրգենի	Ա.գ.ա.	Ֆ.-մ.գ.թ.	72.8
76	Հակոբյան Արմեն Կլիմենտի	Գ.ա.		74.1
77	Փարամազյան Գրենիկ Մխիթարի	Կ.գ.ա.		37.7
78	Հայրապետյան Վահրամ Սուրենի	Ճարտարագետ		74.1
79	Մելքումյան Արարատ Աշոտի	Ճարտարագետ		74.1
80	Գասպարյան Էլենորա Շամիրի	Տեխնիկ		74.1
81	Բրուտյան Սուսաննա Հրանտի /հ/	Ճարտարագետ-գիտահետազոտող		74.1
82	Գրիգորյան Դուրբե Ջավենի	Գրադարանի վարիչ		66.1
83	Բաբայան Շահեն Հակոբի	Վարորդ		40.4
84	Մակարյան Պետրոս Լևոնի /հ./	Ապակեգործ		37.7
85	Հարությունյան Համլետ Սարգսի	Փականագործ		37.7
86	Ասատրյան Երվանդ Արամի	Պահեստի պատասխանատու		72.8
87	Աղիյան Լևոն Նիկոլայի	Պահակ		74.1


88	Հովհաննիսյան Արթուր Եփրատի	Պահակ		79.3
89	Բաբայան Նարինե Հակոբի	Պահակ		79.3
90	Միմոնյան Արտուշ Արտավազի	Պահակ		74.1
91	Համբարձումյան Ռոզա Նորիկի	Հավաքարար		66.1
92	Գալստյան Ֆեդիա Հայկազի	Հավաքարար		66.1
93	Ղազարյան Զոյա Վոլոդյայի	Հավաքարար		70.8
94	Մանուչարյան Մայիս Հայկազի	Վերելակների էլ.մեխանիկ		40.0
Ընդամենը				6863.563

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝


(ստորագրություն)


(Լևոն Թավադյան)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝


(ստորագրություն)

(Մարինա Բալուխինա)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Լևոն Թավադյան)

